ԱԶԳԱՅԻՆ ՏԱՌԱՊԱՆՔԻ, ՄԱՔԱՌՄԱՆ ԵՎ ՀՈՒՅՍԻ ԵՐԳԻՉԸ

(Սիամանթոյի ծննդյան 100-ամյակի առթիվ)

Գ. Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

Քսաներորդ դարի սկզբի հայ պոեզիան, մանավանդ նրա արևմտյան հատվածը, հարուստ է տարբեր խառնվածքի ու ոճի տեր բանաստեղծներով, որոնց փայլուն համաստեղության մեջ որպես առաջին մեծության աստղ շողում է նաև Սիամանթոյի անունը։

Շիրվանզադեի դիպուկ արտահայտությամբ՝ Սիամանթոյի «բոցավառ տաղանդը»[1] *փայլատակեց մեր պատմության մռայլ ու արյունաման գիշերին, երբ Արևմտյան Հայաստանում մոլեգնում էր սուլթան Համիդի և նրան հաջորդած «երիտասարդ թուրքերի» հայահալած քաղաքականությունը, որն իր կնիքը դրեց ժամանակի հայ գրական կյանքի վրա, պայմանավորելով նրա բովանդակության բնույթը։*

Այդ «արյունաներկ գրականության» առավել ցայտուն ներկայացուցիչներից է Սիամանթոն, մի բանաստեղծ, որը խորապես վերապրեց մեր ժողովրդի ողբերգությունը։ Նա դարձավ ազգային տառապանքի, մաքառման ու հույսի երգիչ։ Բանաստեղծի գրչի տակ վերակենդանացան արյան ու ավերի, ցավի ու տառապանքի, ցասման ու ըմբոստացման պատկերներ, որոնք ներթափանցված են ազատամարտի պաթոսով։

Սիամանթոյի բանաստեղծությունների ոչ միայն բովանդակությունը, արտահայտված մոտիվները, այլև ձևը, պատկերների համակարգն ու լեզվաոճական արվեստը պայմանավորված են ժամանակի հայ իրականության թելադրանքով։ Սերտորեն կապված լինելով հայրենի երկրի ու մայր ժողովրդի ճակատագրին՝ բանաստեղծը իր տեսածն ու լսածը արտացոլեց ոչ թե վաղածանոթ հանգերի ու վանկերի, չափական տողերի միջոցով, այլ ազատանհանգ ռիթմական *ոտանավորի չափով։ Կենսական նյութն ինքն էր պահանջում նոր արտահայտչամիջոցներ, նոր դույներ ու շեշտեր, որոնք և հայտնագործեց Սիամանթոն, դրսևորելով իր գեղարվեստական ներկապնակի բազմերանգությունը։ Հրապարակախոսական շունչ, ճարտասանական հարցում ու բացականչություն, արտասովոր պատկերներ ու հնչերանգներ, փիլիսոփայական խոհ ու մարտնչող ոգի. ահա թե ինչով է հատկանշվում Սիամանթոյի բանաստեղծական մտածողությունը, որ մի նոր որակ է հայ բանարվեստի զարգացման ճանապարհին։*

Ինչպես յուրաքանչյուր նորարարի, այնպես էլ Սիամանթոյի արվեստը խարսխված է իր մեծ նախորդների թողած ավանդույթների յուրացման վրա։ Նա շարունակեց ու խորացրեց ըմբոստահույզ ու ազատաշունչ երգերի այն հունը, որը ձգվում է մեզանում Նարեկացուց մինչև Ալիշանն ու Պատկան-

---

[1] Ա. Շիրվանզադե, Երկերի ժողովածու, հատ. 8, Երևան, 1961, էջ 354։

յանը։ Ստեղծագործորեն յուրացնելով անցյալի հերոսական-ռոմանտիկական ավանդույթները՝ Սիամանթոն կռեց ու կոփեց իր քերթողական արվեստը, որը փայլում է ինքնատիպության երանգով։

Սիամանթոն (Ատոմ Յարճանյան, 1878—1915) ծնվել է Արևմտյան Հայաստանի Ակն քաղաքում։ Իր մանկությունը նա անց է կացրել ծննդավայրում, որի Ներսեսյան դպրոցի նախակրթականը ավարտելուց հետո, 1891 թ. հոր հետ փոխադրվում է Պոլիս։ Մոտ երկու տարի նա սովորում է Գում-Գափուի Միրիջանյան դպրոցում, իսկ հետո սկսում հաճախել Ռ. Պերպերյանի վարժարանը։ Հավանորեն հենց այստեղ էլ սկսում է կազմավորվել ապագա բանաստեղծի ստեղծագործական միտքը։ 1896 թ. ամռանը տասնութամյա Սիամանթոն անցնում է Եգիպտոս, իսկ 1897 թ. ուսանելու նպատակով մեկնում ժնև։ Այդ շրջանից Սիամանթոն սկսում է իր գրական փորձերը, տալով չափածո և արձակ գործեր։

Բանաստեղծության հորիզոնի վրա Սիամանթոն առաջին անգամ երևաց 1898 թ. վերջերին, երբ Սուրեն Պարթևյանի «Վաղվան ձայն» ամսաթերթում (Մանչեստր) հրապարակեց «Աքսորված խաղաղությունը» վերնագրով քերթվածը։ Իր այդ բանաստեղծությամբ պատանի հեղինակը դրսևորեց ստեղծագործական ակնառու ձիրք։ Հաջորդ տարում «Նոր կյանք» հանդեսում (Լոնդոն) Սիամանթոն տպագրեց «Արյունին քերթվածը», իսկ 1900 թ. «Անահիտում» (Փարիզ) լույս ընծայեց իր արձակ էջերը՝ «Բարիզյան նոթեր» խորագրով։

Այնուհետև Սիամանթոն աշխատակցում է Փարիզում, ժնևում, Ալեքսանդրիայում, Բոստոնում, ավելի ուշ՝ Պոլսում, Թիֆլիսում և այլուր հրատարակվող հայ պարբերական մամուլին, որի էջերում տպագրած իր բանաստեղծություններով լայն ճանաչում է ձեռք բերում ոչ միայն արևմտահայ, այլև արևելահայ գրական շրջաններում։

«Դյուցազնորեն». այսպես է խորագրված Սիամանթոյի բանաստեղծությունների անդրանիկ ժողովածուն (1901 թ.), որը ջերմ ընդունելություն գտավ ընթերցողների մեջ։ Նորընծա բանաստեղծի մուտքը ողջունեց քննադատությունը, նրա երախայրիքի մեջ տեսնելով «անղուգական տաղանդին ընձյուղները»[2]։

Ինչո՞վ բացատրել այդ, ո՞րն էր Սիամանթոյի հաջողության գաղտնիքը։

Գրական ասպարեզ իջնելով մի այնպիսի ժամանակ, երբ արևմտահայ պոեզիան որոշ չափով ապրում էր գաղափարագեղարվեստական վայրէջք և մամուլում հաճախակի երևան էին գալիս բռնահանգ ու բռնավանկ ոտանավորներ, Սիամանթոն իր ստեղծագործական առաջին իսկ քայլերից հնչեցրեց ցասման ու մաքառման նվագներ՝ տոգորված հույսի ու լավատեսության շեշտերով։ Նրա «ձայնը,— ասել է Վարուժանը,— լռեցուց բոլոր կակազումները։ Իր մուտքը եղավ մրրկային իր արվեստին պես ու հետևաբար բարի ու վճռական»[3]։

Եվ արդարև, Սիամանթոյի խոսքը «բարի ու վճռական» արձագանք գտավ տազարավոր սրտերում, լուսավորեց մարդկանց մտքերն ու հոգիները, հույս

---

2 Տե՛ս «Ճակատամարտ», 1921, № 740/256։

3 «Գրական ասուլիսներ, Զ, Ատոմ Յարճանյան (Սիամանթո)», Կ. Պոլիս, 1913, էջ 26։

ու հավատ ներշնչելով լքվածներին։ Բնորոշ է, որ սույն ժողովածուին որպես քնաբան հեղինակն ընտրել է «Ռիգ-Վեդայից» առնված հետևյալ խոսքը. «Այնքան արշալույսներ կան, որ տակավին չեն ծագած...»։



Արշալույսի հավատով է տոգորված վեց հաջորդական մասից բաղկացած այս գրքույկը, որը նվիրված է հայ երիտասարդությանը։ Մասերն իրար հետ կապակցված են միևնույն գաղափարական շաղախով և այնպես միահյուսված, որ թողնում է լիրիկական պոեմի տպավորություն։ Այն սկսվում է «Հույսին ճամփան» բանաստեղծությամբ։ Վերնագիրն իսկ շատ բան է ասում երիտասարդ հեղինակի գեղագիտական կողմնորոշման և կենսահայեցողության մասին։ Սիամանթոն առույգ տողերով երգում է «մարմարեղեն Հույսին ռահվիրաները», որոնք «ըմբոստացումներու ապառաժներեն իրենց ճակատներն արյունած» և «աչվընեներեն անասելի արհավիրք մը արձակելով», պայքարի են ոգեկոչում «ողջակիզումներու ուխտված սպիտակ տղային», այսինքն իրեն՝ բանաստեղծին.

Եթե կ'ուզես Տառապանքը, դարերուն համար քանդակե.
Բայց մի՛ մոռնար, Անոր աչվընեն ու բերանը ու հոգին, տարփորեն,
Ընդվզումի ստինքներուն կարկառելու...

Տառապանքից բխող ընդվզման մեջ է ազատագրության ելքը, ուստի Հույսի ռահվիրաները «մաքառումի ու ակնկալության օրերուն» կոչ են անում «մոլեգնաբար մահը հոտոտել», «բանալու համար մեծ ճամփաները Հույսին»,

Որպեսզի, վերջապես, երազին երիվարները փոթորկանման
Մեր կամքին ձեռվընեներեն դյուցազնաբար վարվելեն՝
Հաղթանակին կատարներուն վրա արձանանան...

Մեջբերված տողերից իսկ երևում է հեղինակի գեղարվեստական մտածողության ռոմանտիկական ճախրանքը, որն արտահայտվում է ժողովրդական ցասման ու արիության, ուժի ու մարտական ոգու հիպերբոլիկ պատկերներով։ Բանաստեղծը գիտակցաբար չափազանցնում է զանգվածների տարերային ուժի, նրանց հաղթական երթի նկարագրությունը, որ փայլում է լավատեսությամբ։ Նա գիտե, որ «դեռ մայրեր կան, արգասաբեր ու հերարձակ», որոնց «հուսթի ու լայն... կողերուն տակ» մեր արշալույսները փառավորելու համար «մոլեգին դյուցազներու կարմիր երկունքը կ'ապրին...»։ Այդ խոր հավատով են տոգորված Հույսի ռահվիրաները, որոնք վերջին անգամ դիմե-

լով բանաստեղծին՝ կոչ են անում «փայլակն սուրը կտրիճորեն ձեռք առնել» և որպես հավատարմության նշան կամ «երդումներուն երդում» իրենց սրերի հետ խաչաձևել.

Ու գեթ անգամի մը համար՝ ինքներմեդ դուրս գահավիժելեն՝
Եթե կրնաս, մեզի հետ քալե՛։ Ահավասի՛կ ճամփան։

Սույն բանաստեղծությունը միաժամանակ ցուցադրում է հեղինակի ակնհայտ շփումը սիմվոլիստական պոետիկայի հետ, մի բան, որն արձանագրել է ժամանակի քննադատությունը։ Դա վերաբերում է այս շարքի ուրիշ բանաստեղծությունների ևս, ուր դրսևորվել են հեղինակի հախուռն տարերքն ու շառաչուն ոճը։

Պայքարի ու հերոսության էպիկական շնչով է տոգորված նաև «Ճակատամարտը», որն իր ներքին թեմայի ու սյուժեի զարգացմամբ սերտորեն կապված է այդ շարքի նախորդ և հաջորդ բանաստեղծություններին։ Այստեղ հեղինակը վերակենդանացնում է «մեր հին փառքի օրերեն» հառնած արքայի ուրվականը, որը դառնալով հերոսական անցյալի խորհրդանիշ, նոր սերնդին է հանձնում «հայրերու հաղթանակի» դրոշը և ոգեկոչում վճռական մարտի.

Ուրե՞մն, Հառա՞ջ, Հառա՞ջ, ո՛վ Ըմբոստացումի զավկներս արյունաբիբ,
Ես գիտեմ որ կյանքին հանգիստն ու խաղաղությունը այս երկնքին տակ,
Ձեր Հաղթանակեն վերադարձին ցնծությունով պիտի երգեք...

Պատկերն ամբողջանում և գեղարվեստական նոր իմաստ է ստանում «Հաղթանակից հետո» քերթվածում։ Այստեղ արդեն հանդես է գալիս հաղթանակած հայ մարտիկը, որը «արյունաթաթավ քղամիդը» տված հովերին և իր ջահի բոցով մեռելակույտերը լուսավորելով՝ իր մարտակից ընկերներին կոչ է անում «մայրերուն գիրկը ժամանելե առաջ» իրենց սրերը թաղել հողի տակ։ Եվ դա նրա համար, որ ազատություն ու անկախություն նվաճած ժողովուրդը

Այլևս ոչ հաղթանակներու ազատաբեր սուրերուն
Ու ոչ ալ արյունին ահեղությանը պետք ունի...

Այստեղից դժվար չէ հետևցնել, որ Սիամանթոյի իդեալը ազատ հողի ու խաղաղ աշխատանքի երազանքն է։ Նա ևս փայփայում է ժողովրդական կյանքի ստեղծարար ոգին, որի շնչով կյանք ու կենդանություն են առնում հայրենի դաշտերն ու ոստանները։ Ուստի միանգամայն օրինաչափ է, որ այս շարքը եզրափակում է «Հանգրվանը և վաղորդայնը» բանաստեղծությունը, որտեղ տրամաբանական ավարտին է հասնում հեղինակի գեղագիտական իդեալը։

Բանաստեղծի ստեղծագործական զարգացման ճանապարհին նոր քայլ է «Հայոդիներ» ժողովածուն, որի առաջին շարքը լույս տեսավ 1905, երկրորդը՝ 1906, երրորդը՝ 1908 թ.։

Այդ շարքերը միասին վերցրած կազմում են փոթորկահույզ ապրումների ու մտորումների մի ուրույն աշխարհ, որը ներթափանցված է հայրենաշունչ ոգով ու ազատասիրական տրամադրությամբ։ Հաղթահարելով առաջին գրքի ակնհայտ թերությունները (հռետորաբանություն, մտքի մթամածու-

թյուն, երկարաբանություն և այլն), Սիամանթոն այստեղ խորացրել ու ընդլայնել է ազգային տառապանքի ու ցասման թեմայի շրջանակները և հանգել նոր ու համարձակ ընդհանրացումների։

Հատկանշական է, որ այս ժողովածուում հեղինակի ուշադրությունը գլխավորապես կենտրոնացած է կոնկրետ դեմքերի ու դեպքերի կամ, ինչպես Վարուժանն է նշել, «հերոսներուն և դրվագներուն վրա»[4]։ Նա իր խոսքը ուղղում է ըմբոստ ու բռնության դեմ մարտնչող հայորդիներին, պատկերում մոխիրի վրա ծնված և արյան միջով անցած որբերին («Որբերու ճակատագրեն»), ուրվականի նման ճամփեքին դեգերող սովյալներին («Սովամահ»), փառաբանում բանտերում տառապող «հայրենակարոտ կալանավորներին» («Բանտերու խորերեն»), իրենց հայրենիքի համար մահն արհամարհող և կախաղան բարձրացող քաջորդիներին («Կախաղաններու կատարեն») և այլն։

Եվ որպեսզի իր խոսքը լինի տպավորիչ, հորդորանքն՝ ազդեցիկ, Սիամանթոն թանձր գույներով նկարագրում է վայրագ թշնամու ավերածությունները, «օրերուն ոճիրներեն քարուքանդ» եղած բնակավայրերը և նշում, որ երկրում «այլևս հունձք չի կա, հնձող չի կա. սերմնացան չի կա...», որ ամենուրեք տիրում է չարաշուք լռություն.

Ձայն չկար։ Մեռելություն ամենուրեք և ավերակներ լեռնակուտակ,
Ամեն երդիք իր տնվորին վրա կործանված և ամեն աղբյուր
իր երջանիկ երգին...

Բերված տողերն առնված են «Մենախոսություն» բանաստեղծությունից, որն ազգային տառապանքի ու ցավի հուզիչ արտահայտություն է։ Հայրենիքի տառապանքը տեսած և նրա վաղվա արշալույսները փայփայող հայորդին իր եղբայրներին կոչ է անում հաղթական ճակատամարտի.

Հարվածեցե՛ք, հարվածեցե՛ք, մինչև որ Արդարությունը ձեզ
բոլորիդ համբուրե...

Այս բանաստեղծության անմիջական շարունակությունն է «Ատելության կոչը», ուր ավելի է խորանում հեղինակի ըմբոստահույզ տրամադրությունը։ Նա վճռական մարտի է կոչում «և՛ մեռելներուն և՛ ընկճվածներուն և՛ վրեժին և՛ դեռ քնած զորություններուն»։ Դրա հետ միաժամանակ բանաստեղծը պիտի.

... Ռազմակոչե՛ բոլոր անոնք, որոնց մեջ դեռ հույսը իր մարմարե
թևերը չէ բացեր.
Հրա՛նրե այն բոլորը, որոնք ցեղին այս արփիաթև վերածնումը
կ'անգիտանան...

Գալիքի պայծառ երազանքներով լի բանաստեղծը հայորդիներին կոչում է պայքարի ու հերոսացման։ Այդ իմաստով ուշագրավ է նաև «Դարերու վրեժը» բանաստեղծությունը, որտեղ հեղինակը պահանջում է մի կողմ նետել «պաղատանքի, աղոթքի, լացի ու կոծի և ողբի այն մատյանները, որ դար առ դար» սերունդներն իրենց արյունն ու տառապանքն են լացել, և հընչեցնել ռազմի երգեր։ Նա գիտեր, որ «պարտութենե ստրկացում և աղաչանքե արցունք չ'երթալու համար» անհրաժեշտ է ելնել վճռական պայքարի։ Բանաստեղծը հանգում է այն հետևության, որ՝

[4] Նույն տեղում, էջ 25։

... Արդարությունը ստեղծել պետք էր և ազատությունը
մոլեգնաբար հափշտակել...

Հենց դրա համար էլ նա իրեն կոչված է զգում մարտի փող հնչեցնել և ոտքի հանել Հայրենի երկրի «հրեղեն և ըմբոստ մարտիկներուն»։

Նույնպիսի մարտական պաթոսով է տոգորված և «Հողին ձայնը», որը մեր պոեզիայի ամենաինքնատիպ ու սրտագրավ էջերից մեկն է։ Այստեղ հեղինակը Հայրենի հողի միջոցով խոսում է մեր ժողովրդի բազմատանջ ճակատագրի մասին և դարձյալ պայքարի ոգեկոչում։ Իր «ավերակե բերաններ-ը դեպի վեր՝ հորիզոններուն» պարզած, «վրեժով ու ցասումով առլցված» հողը, դիմելով իր «հալածված թափառական զավկրներին»՝ հարազատի ձայնով կոչ է անում ոտքի ելնել և «իրարու զանգված», միասնական ուժերով կռվել հանուն ազատության, հանուն հայրենական քաղաքների վերականգնման, հանուն այն բանի, որ «խաղաղությունը ձեր երդիկների տակ արձանանա»։

Առանձնահատուկ նշանակություն ունի «Կովկաս» բանաստեղծությունը՝ գրված ռուսական առաջին հեղափոխության օրերին։ Ոգեշնչված ցարիզմի «անխախտելի օրենքներուն» հասցված «երկաթակուռ հարվածով», որից փշրվեցին բռնության շղթաները, Սիամանթոն ներբողում է մեր դարի առաջին հեղափոխական հերոսամարտը և այն որակում որպես «ոսկեղեն դարագլուխ», «հավատքի հաղթանակ», «երազված ընդվզում»։ Նրա խորին համոզմամբ այդ մարտում է, որ շողաց «պայքարի սուրերուն ամենեն արդարը» և «ժողովուրդը իր իրավունքը իր կռուփովը պահանջեց...»։ Այդ գիտակցությամբ էլ բանաստեղծը կոչ է անում Կովկասի «սևահեր ու հրաշվի որդիներին» իրենց մարտական մասնակցությամբ նոր զարկ տալ համաժողովրդական պայքարին, որի «աղատաբեր հարվածը» աղատություն է խոստանում նաև «ավերակյալ ու արցունքոտ Հայաստանին».

Զա՛րկ, զա՛րկ, ահավասիկ հորիզոնները կը կապույտնան,
ահավասիկ Առավոտները կը ճեղքվին,
Զա՛րկ, ազատաբեր հարվածիդ շռինդը Մասիսեն ի Տավրոս
և մինչև Հայրենիքին խորերը կը թնդա։

Սիամանթոյի գաղափարական հասունացումն ու աշխարհայացքի լայնությունը երևում են նաև «Որբերու ճակատագրեն» բանաստեղծությունից։ Այստեղ հեղինակը անողոքաբար մերկացնում է Արևմուտքի «մարդասերներին», որոնք սրերի փոխարեն «իրենց շահախնդիր ու մեղավոր խաչերը շարժեցին» և «բաժին մը չոր հացի հետ անգութ որբության մատյանը բերին»։ Բանաստեղծի խորին համոզմամբ նրանց «ժպիտը կեղծ է», «խոստումը մահաբույր և նայվածքնին ծածկամիտ», ուստի ոչ մի դեպքում չպետք է հավատ ընծայել նման «բարերարների»։ Դրանք «սարկության օրենքներն օրհնաբանելով» ուզում էին հայ որբերի «զողդոջ կյանքերուն վրա արևմուտքի սակաբաններուն հիմնաքարերը շարել»։

Ինչպես նշված, այնպես էլ ուրիշ բանաստեղծություններում Սիամանթոն քաղաքացիական կրքով բացահայտում է մեր ժողովրդի պատմության կենսափիլիսոփայությունը և նրա ապրելու, գոյատևելու իրավունքը տեսնում նրա ըմբոստ ու վրիժառու զավակների արդարացի պայքարի մեջ։

Դաժան և արյունոտ ժամանակի ծնունդ էր Սիամանթոն. նա վաղ հա-

սակից տեսել ու զգացել է ազգային վիշտն ու տառապանքը և հետագայում դրանք արտահայտել բանաստեղծական հուժկու ձայնով։

Այդ է վկայում նաև նրա քերթվածների՝ «Հոգեվարքի և հույսի ջահերը» ժողովածուն (1907 թ.), որը նոր աստիճան է հեղինակի գրական ուղեգնացության մեջ։ Այստեղ առավել խորունկ արտահայտություն է գտել Սիամանթոյի անհատական ու հասարակական ապրումների ներդաշնակությունը։ Նրա ես-ը օրգանապես միահյուսվել է ընդհանուրին և դարձել վերջինիս հույզերի ու մտորումների հարազատ արձագանքը։ Այդ կապակցությամբ տեղին է հիշել բանաստեղծի մի խոսքը. «Հոգիս ան է, որ բյուրավոր անգամ ձեր ամենուն ցավն ապրեցավ...»։ Եվ սա անկեղծ խոստովանություն է, որ հաստատվում է այս շարքի շատ բանաստեղծություններով («Հոգիս», «Արցունքներս», «Աղոթք», «Հանգիստի իրիկուն» և այլն)։ Դրանց մեջ հեղինակը, հիրավի, «բյուրավոր անգամ» ապրել է իր ժողովրդի ցավը և նրա «արցունքն իբրև անձրև» տեղացել է իր հոգու վրա («Քնարիս լարերը դեռ թաց են»)։ Հենց դրա համար էլ նրա երգը հնչում է որպես համաժողովրդական տառապանքի մորմոք, որպես տանջված սրտերի անլռելի աղաղակ։ Բանաստեղծն այնքան խորն է վերապրել մեր ժողովրդի կրած ողբերգությունը անցյալ դարավերջին և ընթացիկ դարասկզբին, որ նրա նոր գիրքն ըստ էության դարձել է ազգային ողբերգության յուրատեսակ համանվագ բողոքի շեշտերով։

Այս նոր գրքում Սիամանթոն հանդես է գալիս գերազանցորեն որպես ցավի, տառապանքի երգիչ կամ ինչպես Հովհ. Թումանյանն է ասել, «մեր ազգային վշտի ու կորովի ուժեղ երգիչը...»[5]։ Նրան հուզում ու մտալլկում է հարազատ ժողովրդի ճակատագիրը, որը գնալով ավելի էր մռայլվում։ Այստեղից էլ այն թախծալի շեշտն ու մռայլ երանգավորումը, որ հատուկ են այս շարքի բանաստեղծություններից շատերին։ Բավական է հիշել թեկուզ դրանց վերնագրերը. «Հոգեվարքի իրիկուն», «Ավերումի գիշեր», «Արյուն», «Թաղում», «Մահերգ», «Մահվան տեսիլք», «Մեռելոցի օր», «Անդրշիրիմյան աղաղակ» և այլն։ Ավելի ճնշող տպավորություն են թողնում առանձին բանաստեղծություններ, որոնցում տրված է թուրքական բարբարոսների եղեռնագործությունը։ Ահա, օրինակ, «Մահվան տեսիլքը», որով բացվում է այս ժողովածուի մուտքը.

Կոտորա՜ծ, կոտորա՜ծ, կոտորա՜ծ...
Քաղաքներուն մեջ և քաղաքներեն դո՛ւրս,
Եվ բարբարոսներն արյուններով կը դառնան,
Մեռելներուն ու ոգեվարներուն վրայեն...

Ժողովրդի տառապանքն է բացահայտված «Զարշարանքի երազ» բանաստեղծության մեջ։ Կոտորածների սարսափն ու զարհուրանքը ավելի ցայտուն պատկերացում են ստացել «Գիշեր մը» բանաստեղծությունում, որը հնչում է տագնապալի շեշտերով։

Բանաստեղծությունից բանաստեղծություն ավելի ցայտուն ու ճնշող են դառնում ողբերգական պատկերները, որոնք տոգորված են արյան ու կոտորածի շնչով և արտահայտում են հեղինակի մտքի ու զգացմունքի լարվածությունը։ Սիամանթոն լայնորեն դրոշմել է մեր ժողովրդի ազգային վիշտն ու

5 Ն. Թումանյան, Հուշեր և գրույցներ, Երևան, 1969, էջ 112։

տառապանքը։ Բայց երբ խորամուխ ենք լինում նրա արվեստի բովանդակության ծալքերի մեջ, թափանցում բանաստեղծությունների հյուսվածքը, ղրժվար չէ տեսնել տողերի արանքից ճառագայթող հույսի շողը։ Սիամանթոն համոզված էր, որ «ոչ մեկ հույս կը մեռնի և ոչ մեկ գարուն կը թառամի...»։ Նա գիտեր նաև, որ «կյանքին ցավը արցունքով չէ՛, որ կ'անհետի», այլ պայքարով, կռվով։ Դրա համար էլ բանաստեղծն իրեն հատուկ եռանդով փառաբանում է պայքարն ու հերոսությունը, հաղթանակի հավատն ու հույսը։

Նման մարտաշունչ տրամադրությամբ են ներթափանցված «Անդրշիրիմյան աղաղակ», «Խավար», «Ձեռքերդ ինձ երկարե» և էլի ուրիշ բանաստեղծություններ, որոնց մեջ ուժգնորեն հնչում է մաքառման գաղափարը։

Բանաստեղծն իր մեջ ուժ է գտնում հաղթահարելու վիշտն ու վհատությունը և երգելու մաքառման թափն ու «հաղթանակներու խոստացված հնչյունը»։ Դրանում նրան ոգեշնչում և կենսական ուժ է տալիս ժողովրդական հեղափոխության աննկուն ոգին։ Ուստի զարմանալի չէ, որ իր բանաստեղծություններից մեկում («Ձեռքերդ ինձ երկարե») դիմելով հայրենանվեր զինվորին՝ Սիամանթոն նրանից է աջակցություն խնդրում և նոր թափ առած հնչեցնում «բարկության և ընդվզումի պղինձները»։ Նա վերստին փառաբանում է «ճշմարիտ և բարեկամ սուրը», որը փայլատակում է իբրև մահավճիռ «դարանակալ ոճիրին»։

Խորացնելով իր միտքը՝ Սիամանթոն «Գաղափարին» ոտանավորում հանգում է նոր և ավելի խոր ընդհանրացման։ Նրա համոզմամբ պողպատյա սրերը պետք է «շանթերու պես» շողան, երբ «հայ արյունը անմեղորեն օր մը հոսի», իսկ արդարության, խաղաղության օրերին պիտի դառնան «ձիթենիի կանաչագեղ ոստեր» և կամ «ծունկերուն դիմաց կոտրտելեն...» անցյալի գիրկը նետվեն։

Լավատեսությամբ են տոգորված նաև «Հույսին համար» և մանավանդ «Ասպետին երդը» ոգեշունչ բանաստեղծությունները։ Հատկապես վերջինը գեղարվեստական խոր ներշնչման արգասիք է, ուր փայլում է հեղինակի վառ հավատը բախտորոշ գալիքի նկատմամբ։

Արդիականության հետ քայլող բանաստեղծ էր Սիամանթոն։ Նրա քնարն ակտիվորեն արձագանքում էր կյանքում տեղի ունեցող իրադարձություններին և դրանց գեղարվեստական պատկերման միջոցով արտահայտում իրեն հուզող գաղափարները։

Դա վերաբերում է նաև նրա բանաստեղծությունների նոր շարքին՝ «Կարմիր լուրեր բարեկամես» խորագրով (1909 թ.), որ ստեղծվեց Ադանայի կոտորածի անմիջական տպավորության տակ։

Սիամանթոն իր նոր երգաշարում գեղարվեստական չխամրող գույներով կերտեց այդ ողբերգության մռայլաշունչ պատկերները։ Նման բնույթ ունեն «Պարը», «Լոգանքը», «Դաշույնը», «Խաչը», «Կույրը», «Թթենին», «Խեղդամահ» և էլի ուրիշ գործեր, որոնք հյուսված են կոնկրետ սյուժեների վրա և հագեցած ուժեղ դրամատիզմով։ Հեղինակը իր ուշադրությունը գլխավորապես կենտրոնացրել է առանձին դեպքերի, իրադարձությունների վրա և դրանց ճշմարտացի նկարագրությամբ բացահայտել մարդասպանների վայրագությունը։

Պատմելով ու նկարագրելով Ադանայի արյունալի անցքերը, Սիամանթոն թվում է թե վշտի ծանրության տակ երբեմն կորցնում է հեռանկարը և ընկ-

նում հուսահատության գիրկը։ Բայց դրանք կարճատև պահեր են միայն, որ ընդմիջարկվում են առույգ հնչերանգներով։ Կարելի է հիշել «Սուգը», որտեղ հեղինակը «անծանոթ քրոջը կամ ճակատագրի եղբորը» խորհուրդ էր տալիս չվհատվել, չսարսափել, այլ «ճշմարտության աստղերը զննելով՝ հուսադրվել և հառաջանալ»։ Հուսադրման շնչով է տոգորված հատկապես «Ջավակը»։ Լավատեսական շունչ ունի նաև «Հաղթանակ մը» բանաստեղծությունը, որի հիմքը Զոք-Մարզվանի մարդկանց հերոսական դիմադրությունն է ջարդարարներին։

Գաղութահայության կյանքին ծանոթանալու նպատակով 1909 թ. վերջերին Սիամանթոն մեկնում է Ամերիկա։ Այնտեղ էլ նա, ինչպես ասել է Վարուժանը, հայ պանդուխտների մեջ ճանաչում է «հայուն ամենեն խորունկ վիշտը—կարոտախտը»[6] (ընդգծումը բնագրինն է—Գ. Ս.)։

Լավ է ասված՝ կարոտախտ, որ հալում-մաշում է պանդուխտ հային, դառնացնում նրա կյանքն ու հոգին։ Ինքը՝ Սիամանթոն նույնպես վերապրել է տարագիր հայի մռայլ ճակատագիրը և անձամբ ճաշակել օտար հորիզոններում դեգերող հայությանը բաժին ընկած դառնությունը։ Այդ պատճառով էլ նրան խորապես հուզել է տարբեր հանգամանքների թելադրանքով իր հայրենակիցների արտագաղթը, որի հետևանքով խոպանանում էին հայրենի դաշտերը և միմյանցից բաժանված հարազատները օտարության մեջ ենթարկվում էին ձուլախտի վտանգի։

Անձնական շփումը գաղութահայության հետ Սիամանթոյին առավել քան պարզ է դարձնում արտագաղթի ծանր հետևանքները և նրան տոգորում հայրենակարոտ զգացումներով։ Նման հանգամանքների ծնունդ է «Հայրենի ուրավեր» քերթվածաշարը (1910 թ.), որն ունի «Տասներկու կոչ՝ տարագիր հայությանը» ենթավերնագիրը։ Բանաստեղծը կոչ է անում տարագիր հայերին՝ վերադառնալ հայրենի երկիր, շենացնել նրա քաղաքներն ու գյուղերը։

Այս շարքի բանաստեղծությունները համոզիչ կերպով ցույց են տալիս Սիամանթոյի հայրենասիրական քնարի զարգացման ընթացքը։ Ճիշտ է, նրա նախորդ ժողովածուներում, մանավանդ «Հոգեվարքի և հույսի ջահերում» ևս այս կամ այն չափով արտահայտվել է հայրենասիրության մոտիվը, բայց այստեղ այն ավելի կոնկրետացել ու հնչեղ է դարձել։ Բանաստեղծը հանդել է կենսական երևույթների հոգեբանական բացահայտման ճշմարտացիության։ Նա ստեղծել է պարզ, հասարակ պատումներ, որոնք հարուստ են փիլիսոփայական ընդհանրացումներով և տոգորված են վարակիչ ջերմությամբ։

Իր հայրենասիրական ապրումներն արտահայտելու համար Սիամանթոն գտել է հուզիչ խոսքեր, տպավորիչ պատկերներ և ստեղծել քնարական կերպարների մի ամբողջ շարք։ Դրանք մարմնավորում են սոցիալ-հոգեբանական այն կենդանի մթնոլորտը, որի հետ կապված է մարդն իր ամբողջ էությամբ։ Մեր դեմ ելնում են պանդուխտի մայրը, հայրը, քույրը, եղբայրը, կինը, զավակը և ուրիշ հարազատներ՝ իրենց խոհերով ու ապրումներով, իրենց կարոտաբաղձ սպասումներով ու տագնապներով։ Սիամանթոյին հաջողվել է առանձին անհատների միջոցով բացահայտել հայրենի հողի ձգողական ուժը, նրա հմայքն ու կենսատու ոգին։ Ժողովուրդը և հայրենիքը Սիամանթոյի մոտ պատկերված են անբաժանելի միասնության մեջ։ Բանաստեղ-

6 «Գրական ասուլիսներ, Զ», էջ 27։

ծը խստորեն դատապարտում է նրանց, ովքեր ինչ-ինչ պատճառներով լքում են հայրենիքը և, ընդհակառակը, մեծարում է հողին կառչած և նրա համար կռվված մարտիկներին։

Պարսավելով հայրենիքից փախչողներին և օտար ափերում բախտ որոնողներին՝ Սիամանթոն հավաստում է այն ճշմարտությունը, որ հայրենիքի կենդանության մեջ է նրա զավակների փրկությունը։ Հետևաբար դարձ դեպի հայրենի հողը, վերադարձ պապենական օջախը. ահա «Հայրենի հրավեր» շարքի առաջատար մոտիվը, որ հեղինակի գրչի տակ զարգանում ու ծավալվում է որպես յուրահատուկ կենսափիլիսոփայություն։ Բայց այն էլ նկատենք, որ այդ ընդհանուր գաղափարը Սիամանթոյի մոտ ստացել է գեղարվեստական տարբեր դրսևորումներ, որոնք ունեն հոգեբանական խորք և ներքին դրամատիզմ։ Բավական է հիշել միայն «Հայ դաշտերուն պաղատանքը», որ հնչում է որպես ազգահավաքման կոչ, որպես հրավեր խաղաղ աշխատանքի ու բարության, որպես կանչ ստեղծարար գործունեության։

Մեր քննարկած քերթվածաշարքերով չի սպառվում, իհարկե, Սիամանթոյի գեղարվեստական ժառանգությունը։ Նրա գրչին է պատկանում նաև «Սուրբ Մեսրոպ» լիրիկական պոեմը՝ գրված հայ գրերի գյուտի 1500-ամյակի առթիվ, ինչպես և մի քանի ուրիշ բանաստեղծություններ։ Հայտնի է նաև, որ բանաստեղծը ծրագրել էր գրել «Եղերամայր», «Ճառագայթներ», «Մտածումի և կյանքի տաճարներ» և էլի ուրիշ գործեր։ Բայց ինչպես դրանք. այնպես էլ ուրիշ շատ մտահղացումներ մնացին անկատար հեղինակի ողբերգական վախճանի պատճառով։ 1915 թ. ապրիլյան եղեռնին զոհ գնաց նաև Սիամանթոն, երբ նոր էր բոլորել երեսունյոթ տարին։

Եվ չնայած իր կարճատև կյանքին, բանաստեղծը մեր պոեզիան հարստացրեց անմեռ արժեքներով, որոնք նրան դարձրին հայ բանարվեստի ճանաչված վարպետներից մեկը։ Շուրջ մեկուկես տասնամյակ տևած գրական գործունեության ընթացքում նա ապրեց ժողովրդի կենսական շահերով և երգեց նրա վիշտն ու տառապանքը, ազատագրական պայքարն ու հաղթանակի հույսը, դառնալով իր խոսքերով ասած՝ «ցեղի հոգիի ճայելին»։

ПЕВЕЦ НАЦИОНАЛЬНЫХ СТРАДАНИЙ, БОРЬБЫ И НАДЕЖДЫ

(К 100-летию со дня рождения Сиаманто)

Г. А. САРКИСЯН

(Резюме)

Видный армянский поэт Сиаманто (Атом Ярджанян, 1878—1915), пережив трагедию своего народа в конце прошлого и начале нынешнего веков, стал певцом национальных страданий, борьбы и надежды. За свою более чем пятнадцатилетнюю литературную деятельность Сиаманто создал несколько поэтических циклов («По-богатырски», «Сыны армян», «Факелы агонии и надежды», «Красные вести от друга», «Призыв родины»); их анализ выявляет идейно-художественные тенденции творчества поэта. Литературное наследие Сиаманто, как и его место в истории развития армянской поэзии, рассматривается и оценивается в статье в тесной связи с жизнью армянского народа в указанный период.